ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ՁՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

գ. Ձորագյուղ **«26» «10» 2018թ.**
ժ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Լ. Ումրշատյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Սողոյան, Գ. Սարոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Սարգսյան

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Եթե Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից սահմանված ժամկետում՝ վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցման մասին տեղեկատվությունը կոմիտեի կողմից չի ստացվել, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Ուստի հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ և 46-րդ կետերի դրույթներ՝ և Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր (գնահատման թերթիկները կցվում է)՝

- Մարտունու <<Նորոգշին>> ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 31.10.2018թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ձորագյուղ, 12-րդ փողոց 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Լ. Ումրշատյան

Անդամներ՝ _____ Ռ. Սողոյան,

_____ Գ. Սարոյան

Քարտուղար՝ _____ Ն. Սարգսյան